# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՍԱՐԻԳՅՈՒՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Սարիգյուղ համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, գ.Սարիգյուղ, , sarigyugh.tavush@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

15 ՄԱՐՏԻ 2019թվականի N 20-Ա

## ՕՐԱԿԱՐԳԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <Տեղական ինքնակառավարման մասին>Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի պահանջներով,ավագանին որոշում է՝

1.ՄԱՐՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ԶՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ԵՎ ՀԱԿԱՌԱԿՈՐԴԻ ԿՈՂՄԻՑ ՀՈՂԱՏԱՐԱԾՔՆԵՐԻ ԳՆԴԱԿՈԾՄԱՆ ԴԵՊՔԵՐ ՈՒՆԵՑՈՂ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՍԱՀՄԱՆԱՄԵՐՁ ՍԱՐԻԳՅՈՒՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՀՈՂԻ ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԵՎ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ ԸՍՏ ՀԱՏԿԱՑՈՒՄՆԵՐԻ

2.ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉ ԱՂԱՍԻ ՖԱՀՐԱԴԻ ԷԼԼԱՐՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՔՆՆԱՐԿՄԱՆ ՄԱՍԻՆ

Կողմ -3 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԳՈՒԼԻՆՅԱՆ ՎԱՀԱԳՆ

ԵԳԱՆՅԱՆ ՀՈՒՆԱՆ

ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ ՄԵՍՐՈՊ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԵՅՐԱՆ ՍԱՐԻԲԵԿՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՍԱՐԻԳՅՈՒՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Սարիգյուղ համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, գ.Սարիգյուղ, , sarigyugh.tavush@mta.gov.am

### Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 ՄԱՐՏԻ 2019թվականի N 21-Ա

### ՄԱՐՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ՉՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ԵՎ ՀԱԿԱՌԱԿՈՐԴԻ ԿՈՂՄԻՑ ՀՈՂԱՏԱՐԱԾՔՆԵՐԻ ԳՆԴԱԿՈԾՄԱՆ ԴԵՊՔԵՐ ՈՒՆԵՑՈՂ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՍԱՀՄԱՆԱՄԵՐՁ ՍԱՐԻԳՅՈՒՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՀՈՂԻ ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԵՎ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ ԸՍՏ ՀԱՏԿԱՑՈՒՄՆԵՐԻ

Համայնքի ղեկավարը ավագանուն ներկայացրեց ՀՀ կառավարության 18.12.2014թվականի թիվ 1444-Ն որոշումը, մարտական գործողությունների հետևանքով չօգտագործվող և հակառակորդի կողմից հողատարածքների գնդակոծման դեպքեր ունեցող սահմանամերձ Սարիգյուղ համայնքին 2019թվականին հողի հարկ վճարող ֆիզիկական և իրավաբանական անձանց պետական աջակցություն ցուցաբերելու մասին:

Կազմվել է Սարիգյուղ համայնքի հողի հարկ վճարող ֆիզիկական անձանց ցուցակ, ընդհանուր գումարը 2.254.6/երկու միլիոն երկու հարյուր հիսունչորս հազար վեց հարյուր/ դրամ:

Ղեկավարվելով <Տեղական ինքնակառավարման մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին կետի 42-րդ ենթակետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 18.12.2014թվականի թիվ 1444-Ն որոշման 3-րդ կետի 2-րդ ենթակետը, ավագանին որոշում է.

1.Հաստատել Տավուշի մարզի Սարիգյուղ համայնքի մարտական գործողությունների հետևանքով չօգտագործվող և հակառակորդի կողմից գնդակոծման դեպքեր ունեցող հողի հարկ վճարող ֆիզիկական անձանց ցուցակը՝ ընդհանուր գումարը 2.254.6/երկու միլիոն երկու հարյուր հիսունչորս հազար վեց հարյուր / դրամ:

2.Հանձնարարել համայնքի ղեկավարին՝ մարտական գործողությունների հետևանքով չօգտագործվող և հակառակորդի կողմից գնդակոծման դեպքեր ունեցող հողի հարկի գումարը բաժանել պետբյուջեով սահմանված համամասնություններին համապատասխան:

3.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրմանը հաջորդող օրվանից:

Կողմ -3 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԳՈՒԼԻՆՅԱՆ ՎԱՀԱԳՆ

ԵԳԱՆՅԱՆ ՀՈՒՆԱՆ

ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ ՄԵՍՐՈՊ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԵՅՐԱՆ ՍԱՐԻԲԵԿՅԱՆ**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՍԱՐԻԳՅՈՒՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Սարիգյուղ համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, գ.Սարիգյուղ, , sarigyugh.tavush@mta.gov.am

### Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
15 ՄԱՐՏԻ 2019թվականի N 22-Ա

### ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉ ԱՂԱՍԻ ՖԱՀՐԱԴԻ ԷԼԼԱՐՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՔՆՆԱՐԿՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <Տեղական ինքնակառավարման մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին կետի 36-րդ ենթակետով, հիմք ընդունելով համայնքի բնակիչ Աղասի Էլլարյանի դիմումը, ավագանին որոշում է՝

1.Դիմել ՀՀ բնապահպանության տարածքային բաժին՝ ստանալու համապատասխան եզրակացություն՝ դիմումում նշված ծառերի հատման վերաբերյալ:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրմանը հաջորդող օրվանից:

Կողմ -3 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԳՈՒԼԻՆՅԱՆ ՎԱՀԱԳՆ

ԵԳԱՆՅԱՆ ՀՈՒՆԱՆ

ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ ՄԵՍՐՈՊ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԵՅՐԱՆ ՍԱՐԻԲԵԿՅԱՆ**